

ձի. միայն քարքարուտ լինելուն՝ գերանդին չբանիր այլ մարանտիով պիտի հնձուի:

Գիւլիճէի արտերն ամբողջ ջրարբի են, ջուրը կըստանան Արասիօլ ասուած լճակէ մի, որ Արասիօլ գիւղի մօտ շինուած է, գիւղացիք տակաւ առ տակաւ ընդարձակելու վերայ են: Զուրը Ղապխա (Թէփէ կոչուած լեւան արեւմտեան ստորտան քերելով կիջնայ, կը բաժանուի Գիւլիճէի քաւշանի մէջ, նոյնպէս Մօլլաղամէրայ:

Լճի ջուրն ամբողջ աշուն բաւ է, օգոստոսի մէջ՝ հունձքէն անմիջապէս յետոյ գարնվարներն կը սերմանեն ու կը ջրեն, մինչև ձմեռն լաւ կը կանանչին, մէկ երկու թիւղ կանանչը կը բարձրանայ:

Աշնցանը գիւղս առատ է, կը ցանեն նաև գարնցան (կարմիր հատ) և գարի. շատ քիչ կտաւատ:

Այս քարքարուտ վայրը շնորհիւ ոռոս կառավարութեան լաւ վիճակ մի ստացած են գիւղացիքս, որք Բայազիտի Պապխան և Գիւլիճէ, նաև Ալաշկերտի Կօլասոր, Եօնճալու և Չամբլու գիւղերէ գաղթած են 50 կամ 60 տարի առաջ:

Ժողովուրդն դեռ կը պահէ մեծ մասամբ Բաղրեւանդայ ժողովրդեան վարքն ու բարքն և սովորութիւններն նա և բարբառն. արդէն որոց բարբառով կարգ մի առակներ, առածներ և սովորութիւններ զրի առած՝ Ալաշկերտի սովորութեանց մէջ գետեղած եմ:

Մօլլա-Ղամէր եկեղեցի ունէր, քահանայն անցեալ 1892 ձմեռն վախճանեցաւ, նոյն թուին ևս մի նոր եկեղեցի շինուեցաւ Կուլաբ գիւղն, ուր այս երկու եկեղեցեաց կը հսկէ մի քահանայ և կայ զառամեալ վիճակի մէջ:

Մի ուսումնարան կայ՝ կառավարութիւնը բացած: